ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 դեկտեմբերի 2021 թվականի N 2172 - Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ կետին, 9-րդ հոդվածի 3-րդ, 6-րդ, 10-րդ, 12-րդ, 14-րդ և 16-րդ կետերին, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասին և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակում կատարել վերաբաշխում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն

որոշման ցուցանիշներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1-29 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) ա. «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 7 աղյուսակում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման N 5 հավելվածի N 6 աղյուսակի 1212 ծրագրի 12007 միջոցառման գծով «այդ թվում՝ ըստ կատարողների» տողին հաջորդող տողում «ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բառերը փոխարինել «ՀՀ կառավարություն» բառերով,

բ. «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 3 աղյուսակի «Ընդամենը» տողը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գծով ներքոնշյալ ծրագրերի բյուջետային հատկացումները, ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, շարադրել ստորև ներկայացված աղյուսակում նշված բաշխվածության՝

(հազ. դրամ)

«

Ծրագրային դասիչը		Բյուջետային գլխավոր կարգադրիչների, ծրագրերի, միջոցառումների և ուղղությունների անվանումները	Ընդամենը	այդ թվում՝			
ծրագիրը	միջոցառումը			կառուցման աշխատանքներ	վերակառուցման, վերանորոգման և վերականգնման աշխատանքներ	նախագծահետազոտական, գեոդեզիաքարտեզագրական աշխատանքներ	ոչ ֆինանսական այլ ակտիվների ձեռքբերում
		ԸՆԴԱՄԵՆԸ	**133,009,116.7**	**88,020,653.2**	**35,151,985.6**	**1,319,682.6**	**8,516,795.3**
		այդ թվում՝					
		ՀՀ	**2,000,000.0**	**1,523,996.0**	**425,000.0**	**51,004.0**	**0.0**

		ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ					
		այդ թվում՝					
1228	**31001**	**Հակակոռուպցիոն կոմիտեի շենքային պայմանների ապահովում**	**1,000,000.0**	**964,000.0**		**36,000.0**	
1228	**31002**	**Հակակոռուպցիոն դատարանի շենքային պայմանների ապահովում**	**1,000,000.0**	**559,996.0**	**425,000.0**	**15,004.0**	
		ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	**88,369,623.8**	**82,511,949.1**	**0.0**	**0.0**	**5,857,674.7**
		այդ թվում՝					
1169	**31001**	**ՀՀ պաշտպանության նախարարության շենքային պայմանների բարելավում**	**87,239,823.8**	**82,511,949.1**	**0.0**	**0.0**	**4,727,874.7**

»,

գ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման N 1 հավելվածի N 1.5 աղյուսակում «1211 ծրագրի «44001» միջոցառման գծով «Քանակական» Միջազգային ֆինանսական կազմակերպությունների թիվ, հատ» տողի «Տարի» սյունակում «1» թիվը փոխարինել «2» թվով.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 2-Ն որոշման հավելվածներում՝

- 1205 ծրագրի «12009» դասիչը փոխարինել «12010» դասիչով, իսկ միջոցառման անվանումը «միանվագ» բառից հետո լրացնել «կամ պարբերական» բառերով,
- 1205 ծրագրի «12010» դասիչը փոխարինել «12011» դասիչով,
- 1205 ծրագրի «12011» դասիչը փոխարինել «12016» դասիչով,
- 1205 ծրագրի «12012» դասիչը փոխարինել «12020» դասիչով,
- 1205 ծրագրի «12013» դասիչը փոխարինել «12021» դասիչով,
- 1205 ծրագրի «12014» դասիչը փոխարինել «12022» դասիչով.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և փոփոխություն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին բանկային քարտային հաշիվներով շրջանառվող միջոցների չափաքանակները հաստատելու մասին» N 80-Ն որոշման NN 4 և 5 հավելվածներում 1200 ծրագրի 11001 «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման «Արդյունքային չափորոշիչներ» բաժնից հանել «Միջոցառումն իրականացնողներ, հատ» տողը, իսկ «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններից օգտվելու դեպքերի թիվ, հատ» տողի «առաջին եռամսյակ», «առաջին կիսամյակ», «ինն ամիս» և «տարի» սյունակները համապատասխանաբար լրացնել «(4000)», «(8500)», «(19000)» և «(19000)» թվերով.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 158-Ն որոշման հավելվածներում՝

- 1205 ծրագրի «12017» դասիչը փոխարինել «12024» դասիչով.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 188-Ն որոշման հավելվածները լրացնել 1139 ծրագրի 11001 միջոցառումով՝ համաձայն NN 11-14 հավելվածների.

6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին»

օրենքում վերաբաշխում ու փոփոխություն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 194-Ն որոշման N 2 հավելվածում «11 ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ, 01 ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ, 01 ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ, ՀՀ կառավարություն, 1139 ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ, 11001 ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ, ՀՀ կառավարություն, ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, ԱՅԼ ԾԱԽՍԵՐ տողերի «Առաջին եռամսյակ», «Առաջին կիսամյակ», «Ինն ամիս» և «Տարի» սյունակները համապատասխանաբար լրացնել «362,271.8», «733,043.7», «1,102,705.5» և «1,464,977.3» թվերով.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 217-Ն որոշման N 3 հավելվածում՝

- 1202 ծրագրի «11003 Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման «ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տողի «Առաջին եռամսյակ», «Առաջին կիսամյակ», «Ինն ամիս» և «Տարի» սյունակները համապատասխանաբար լրացնել «160,000.0», «350,000.0», «350,000.0» և «350,000.0» թվերով,

- 1200 ծրագրի «11001 Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման «ընդամենը ծախսեր», «ընթացիկ ծախսեր», «սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ», «Սոցիալական օգնության դրամական արտահայտությամբ նպաստներ (բյուջեից)» և «այլ նպաստներ բյուջեից» տողերի «Առաջին եռամսյակը» սյունակում «2,296,927.1» թիվը փոխարինել «2,136,927.1» թվով,

- 04 «Հանրային առողջապահական ծառայություններ» խմբի «Առաջին կիսամյակ», «Ինն ամիս» և «Տարի» սյունակներում «2,176411.0» թիվը փոխարինել «2,246,927.1» թվով.

8) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում ու փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և գնման գործընթացը կազմակերպելու մասին» N 219-Ն որոշման N 4 հավելվածի 1224 «Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման ծրագիր» ծրագրի 12003 «ՀՀ-ում աշնանացան ցորենի արտադրության խթանման նպատակով սուբսիդավորում» միջոցառման «Արդյունքի չափորոշիչներ» տողում «Տրամադրվող աշնանացան ցորենի սերմնանյութի քանակ, տոննա» բառերը փոխարինել «Նախորդ տարի տրամադրված աշնանացան ցորենի սերմնանյութի քանակ, տոննա» բառերով.

9) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 223-Ն որոշման NN 3 և 4 հավելվածներում «1205» ծրագրի դասիչը փոխարինել «1011» դասիչով.

10) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 224-Ն որոշման N 3 հավելվածն ուժը կորցրած ճանաչել, իսկ NN 2 և 4 հավելվածների «44001» միջոցառման դասիչի միջոցառման տեսակը տողում «ֆոնդի փայի ձեռքբերում» բառերը փոխարինել «Բաժնեմասերի ձեռքբերում» բառերով.

11) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ ու լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու, ինչպես նաև գնման պայմանագրում փոփոխություն կատարելու թույլտվություն տալու մասին» N 257-Ն որոշման NN 1, 2 և 4 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 15-17 հավելվածների.

12) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 4-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 318-Ն որոշման N 4 հավելվածում 1165 ծրագրային դասիչի «Դուբայ ԷՔՍՊՈ-2020» համաշխարհային ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցության ապահովում» միջոցառման «11002» դասիչը փոխարինել «11005» դասիչով.

13) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 371-Ն որոշման N 14 հավելվածի աղյուսակից հանել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գծով 2,296,927.1 հազ. դրամի չափով ավելացումներ նախատեսող տողերը.

14) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը գումար

հատկացնելու մասին» N 415-Ն որոշման N 7 հավելվածը լրացնել 1167 ծրագրի «42009» միջոցառման արդյունքային ցուցանիշներով՝ համաձայն N 18 հավելվածի.

15) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 418-Ն որոշման N 3 հավելվածի «11008 Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID) կանխարգելմանն ուղղված պատվաստանյութի ձեռքբերման միջոցառումներ» միջոցառումից առաջ լրացնել «Ծրագիր» սյունակը՝ «1003» դասիչով, «Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների, ծրագրերի, միջոցառումների և միջոցառումները կատարող պետական մարմինների անվանումները» սյունակը՝ «Հանրային առողջության պահպանում» բառերով, «Առաջին եռամսյակ» սյունակը՝ «0.0», «Առաջին կիսամյակ», «Ինն ամիս» և «Տարի» սյունակները՝ «2,296,927.1» թվերով.

16) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 1-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 461-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա. 1-ին կետում «NN 3, 4 և 5» ու «NN 1, 2 և 3» բառերը համապատասխանաբար փոխարինել «NN 3, 4, 5, 9 և 9.1» ու «NN 1, 2, 3, 4 և 5» բառերով,

բ. որոշման N 3 հավելվածի 1126 ծրագրի «12002 Հետազոտման, բուժման հետ կապված ծախսերի փոխհատուցում» միջոցառման «Սոցիալական օգնության դրամական արտահայտությամբ նպաստներ (բյուջեից)» տողի «ինն ամիս» և «տարի» սյունակներում «34.748.4» թիվը փոխարինել «37,748.4» թվով.

17) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու, «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 526-Ն որոշման NN 2 և 3 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 19 և 20 հավելվածների.

18) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 529-Ն որոշման հավելվածներում՝

- 1205 ծրագրի «12024» դասիչը փոխարինել «12025» դասիչով.

19) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 591-Ն որոշման N 2 հավելվածի 1139 ծրագրի 11001 միջոցառման գծով աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 21 հավելվածի.

20) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը գումար հատկացնելու, «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 639-Ն

որոշման NN 1-5 հավելվածներում «1112» ծրագրի «11002» միջոցառման դասիչը փոխարինել «11003» դասիչով.

21) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 786-Ն որոշման NN 3 և 4 հավելվածներից հանել ֆինանսական ցուցանիշները.

22) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 980-Ն որոշման 2-րդ կետը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի» բառերից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 7 աղյուսակում և» բառերով.

23) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 833-Ն որոշման N 3 հավելվածում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1655-Ն որոշման N 2 հավելվածում 1139 ծրագրի «11001 ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» միջոցառման տնտեսագիտական դասակարգման «Այլ ծախսեր» հոդվածը փոխարինել «Պահուստային միջոցներ» հոդվածով.

24) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 1042-Ն որոշման N 4 հավելվածի 1148 «Արտադպրոցական դաստիարակության ծրագիր» ծրագրի 32004 «Մարզադպրոցների գույքային և տեխնիկական ապահովվածության բարելավում» միջոցառման աղյուսակի «Միջոցառման տեսակը՝» տողում «Ծառայությունների մատուցում» բառերը փոխարինել «Այլ պետական կազմակերպությունների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ» բառերով, իսկ «Ծառայությունը մատուցող կազմակերպության(ների) անվանում(ներ)ը՝» բառերը՝ «Ակտիվն օգտագործող կազմակերպության անվանումը» բառերով.

25) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Արցախի Հանրապետության կառավարությանը միջպետական վարկ տրամադրելու, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1096-Ն որոշումից հանել N 3 հավելվածը.

26) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և գումար հատկացնելու մասին» N 1098-Ն որոշման NN 2, 5, 6 և 8 հավելվածներում բյուջետային 1016 ծրագրի 11004 միջոցառմանն ուղղվող 38,360.0 դրամի վերաբաշխումն իրականացնել առանց Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի ներգրավման.

27) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1167-Ն որոշման NN 1, 2, 3 և 4 հավելվածների 1139 ծրագրի 11001 միջոցառման «տարի» սյունակներում «(2,200,000.0)» թիվը փոխարինել «(5,864,530.0)» թվով, ինչպես նաև լրացնել նոր տողով՝ «1139 ծրագրի 11001 միջոցառում», «Տարի» սյունակում՝ «3,664,530.0» թվով.

28) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Արցախի Հանրապետության կառավարությանը միջպետական վարկ տրամադրելու, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1252-Ն որոշումից հանել N 3 հավելվածը.

29) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 6-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1294-Ն որոշման NN 2, 3 և 4 հավելվածների բյուջետային 1022 ծրագրի «12004. Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» միջոցառման անվանումից հանել «ագրովերամշակման ոլորտին» բառերը, NN 2 և 4 հավելվածների միջոցառման նկարագրությունից, ինչպես նաև N 4 հավելվածի «Շահառուների ընտրության չափանիշները» տողից՝ «ագրովերամշակող» բառը.

30) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի

մասին» օրենքում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը գումար հատկացնելու մասին» N 1364-Ն որոշման N 9 հավելվածում 1138 ծրագրի 11001 միջոցառման բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ», «Գրասենյակային նյութեր» հոդվածները և 31001 միջոցառումը հանել, իսկ «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» հոդվածի «Ինն ամիս» և «Տարի» սյունակներում «267,313.5» թվերը փոխարինել «361,749.4» թվերով.

31) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Արցախի Հանրապետության կառավարությանը միջպետական վարկ տրամադրելու, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1397-Ն որոշումից հանել N 4 հավելվածը.

32) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն և 2021 թվականի օգոստոսի 3-ի N 1252-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 1398-Ն որոշման N 5 հավելվածում «1» ցուցանիշը փոխարինել «(1)» ցուցանիշով և «Ազգային վենչուրային հիմնադրամի կողմից կատարվող ներդրումներ (ընդհանուր գումար (ԱՄՆ դոլար)» ցուցանիշից առաջ լրացնել «(5,000,000.0)» թվով.

33) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, Հայաստանի

Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1459-Ն որոշման N 1 հավելվածում «Հանրակրթության ծրագիր» ծրագրի գծով նշված «1046» դասիչը փոխարինել «1146» դասիչով, իսկ NN 1, 2, 3, 4 և 5 հավելվածներում «Հանրակրթության ծրագիր» ծրագրի «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեության ապահովում» միջոցառման գծով «12013» դասիչը՝ «12014» դասիչով.

34) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1523-Ն որոշման N 2 հավելվածում 1149 «Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում» ծրագրի «Մասնագիտական վերապատրաստում անցնող ունկնդիրներին կրթաթոշակի տրամադրում» միջոցառման գծով նշված «11001» դասիչը փոխարինել «12001» դասիչով.

35) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1558-Ն որոշման N 3 հավելվածի 1004 «Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի 11011 միջոցառման մեջ «Այլ ծախսեր» տնտեսագիտական հոդվածի «(183,730.2)» ֆինանսական ցուցանիշը փոխարինել «(183,730.3)» ցուցանիշով և 1072 «Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում» ծրագրի 11009 միջոցառման մեջ «Այլ ծախսեր» տնտեսագիտական հոդվածի «183,730.2» ֆինանսական ցուցանիշը փոխարինել «183,730.3» ցուցանիշով.

36) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1559-Ն որոշման N 8 հավելվածի աղյուսակում «Այլ լիցենզիաների համար» բառերը փոխարինել «Պղնձի խտահանք և մոլիբդենի խտահանք արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի համար լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար» բառերով.

37) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 1576-Ն որոշման N 2 հավելվածի աղյուսակի «09» բաժնի «06» խմբի «01» դասի 1146 «Հանրակրթության ծրագիր» ծրագրի 12012 «Ուսուցչի օրվա առթիվ հանրակրթական ուսումնական հաստատությունների լավագույն մանկավարժների պարգևատրում» միջոցառումը դիտարկել «09» բաժնի «02» խմբի «01» դասում.

38) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Արցախի Հանրապետության կառավարությանը միջպետական վարկ տրամադրելու, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1619-Ն որոշման NN 2 և 4 հավելվածներում «(12,266,569.8)» թիվը փոխարինել «12,266,569.8» թվով, իսկ N 3 հավելվածը հանել.

39) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու ու գնման պայմանագրերում փոփոխություն կատարելու թույլտվություն տալու մասին» N 1626-Ն որոշման N 2 հավելվածի աղյուսակի «Միջպետական նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում՝» տողի «Ընդամենը» սյունակում «95,719.6» թիվը փոխարինել «32,354.7» թվով, իսկ «Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում՝» տողի «Ընդամենը» սյունակում «77,339.5» թիվը՝ «24,201.7» թվով.

40) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1655-Ն որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1. Սահմանել, որ սույն որոշմամբ սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման և այլ համալիր միջոցառումների իրականացման ծախսերը կարող են իրականացվել բանկային վճարային քարտի միջոցով:».

41) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1658-Ն որոշման N 4 հավելվածում 1049 ծրագրի 11001 միջոցառման «Պետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և շահագործում» անվանումը փոխարինել «Միջպետական և հանրապետական

նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ» անվանումով.

42) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բյուջետային վարկ տրամադրելու, «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1688-Ն որոշման NN 2, 3 և 4 հավելվածներում 1167 ծրագրի «42013» միջոցառման դասիչը փոխարինել «42009» դասիչով.

43) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություններ ու լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 1697-Ն որոշման NN 1, 2 և 4 հավելվածներում բյուջետային 1224 ծրագրի «12004. ՀՀ-ում աշնանացան ցորենի արտադրության խթանմանը պետական աջակցություն» միջոցառմանն ուղղվող 9,000.0 հազ. դրամի վերաբաշխումն իրականացնել՝ ներգրավելով (մուտքը և ելքն իրականացնելով) բյուջետային 1139 ծրագրի «11001. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» միջոցառումը.

44) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 14-ի «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1701-Ն որոշման NN 2-3 հավելվածներում «42002» միջոցառման դասիչը փոխարինել «44001» միջոցառման դասիչով և նույն

միջոցառման դասիչի միջոցառման տեսակը տողում «Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերումից ելքեր» բառերը փոխարինել «Բաժնեմասերի ձեռքբերում» բառերով.

45) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1735-Ն որոշման N 10 հավելվածի 1168 ծրագրի 11023 միջոցառման գծով աղյուսակի «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» տողի «դրամաշնորհային միջոցներ» սյունակում «24,832.7» թիվը փոխարինել «20,693.9» թվով, «համաֆինանսավորում» սյունակը լրացնել «4,138.8» թվով, «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տողի «ընդամենը» սյունակում «6,208.1» թիվը փոխարինել «12,416.3» թվով, «դրամաշնորհային միջոցներ» սյունակում «6,208.1» թիվը փոխարինել «10,346.9» թվով, «համաֆինանսավորում» սյունակում «6,208.2» թիվը՝ «2,069.4» թվով.

46) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և փոփոխություն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում հողամասեր ներդնելու մասին» N 1777-Ն որոշման N 7 հավելվածում «բաժին 01, խումբ 03 դաս 03» բառերը փոխարինել «բաժին 04, խումբ 09, դաս 01» բառերով.

47) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություն

և լրացում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և գույք ամրացնելու մասին» N 1783-Ն որոշման NN 1-7 հավելվածներում 1126 ծրագրի «31006» միջոցառման դասիչը փոխարինել «31001» դասիչով.

48) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1810-Ն որոշման՝

ա. N 6 հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾՐԱԳՐԵՐՈՎ» տողում «(170,297.8)» ֆինանսական ցուցանիշը փոխարինել «(174,576.5)» ցուցանիշով, «ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ» տողում և 1004 «Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի 11011 միջոցառման մեջ «Այլ ծախսեր» տնտեսագիտական հոդվածի «(50,197.8)» ֆինանսական ցուցանիշը փոխարինել «(54,476.5)» ցուցանիշով,

բ. N 8 հավելվածի NN 1 և 2 աղյուսակներում նշված 1004 ծրագրի 31010 միջոցառման «Կառուցվող ջրատար (կմ)» տողում «(1.8)» թիվը փոխարինել «(1.2)» թվով.

49) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1821-Ն որոշման NN 4 և 5 հավելվածների 1040 ծրագրի «42002» միջոցառման դասիչը փոխարինել «42003» դասիչով, իսկ «42003» միջոցառման դասիչը՝ «42002» դասիչով, ինչպես նաև որոշումը լրացնել 1040 ծրագրի «42002, 42003» և 1167 ծրագրի «42003, 42005, 42008» միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների վերաբերյալ նոր՝ N 16 հավելվածով՝ համաձայն N 22 հավելվածի.

50) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» N 1822-Ն որոշումը լրացնել նոր՝ N 7 հավելվածով՝ համաձայն N 23 հավելվածի.

51) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1852-Ն որոշման NN 1, 2 և 4 հավելվածների «1231» ծրագրի «11001» միջոցառման կատարող՝ որպես բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ, մարմնի անվանումը ներկայացնող տողում «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե» բառերը փոխարինել «ՀՀ արդարադատության նախարարություն» բառերով, ինչպես նաև N 4 հավելվածի վերնագրում «ԵՎ 9.48 ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐՈՒՄ» բառերը փոխարինել «ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ» բառով.

52) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Արցախի Հանրապետության կառավարությանը միջպետական վարկ տրամադրելու, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1936-Ն որոշումից հանել N 4 հավելվածը, իսկ NN 3 և 5 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 24 և 25 հավելվածների.

53) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը նվիրաբերություն ընդունելու և Հայաստանի Հանրապետության գանձապետարանում հաշիվ բացելու թույլտվություն տալու, «Հայաստանի Հանրա-

պետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1971-Ն որոշումից հանել 4-րդ կետը, իսկ 5-րդ կետում «5.» թիվը փոխարինել «4.» թվով.

54) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1982-Ն որոշման N 4 հավելվածի աղյուսակում «Այլ եկամուտներ, ընդամենը» բառերը փոխարինել «Պետական տուրք, ընդամենը» բառերով.

55) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1951-Ն որոշման NN 5, 7 և 8 հավելվածների 1015 ծրագրի 12001 միջոցառման՝ ըստ կատարողների տողում «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բառերը փոխարինել «Այլ մարմիններ» բառերով.

56) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 2030-Ն որոշման N 4 հավելվածի աղյուսակում «Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցման

ծրագրի խորհրդատվություն և կառավարում» միջոցառման կատարողը տողում «ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բառերը փոխարինել «ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե» բառերով, իսկ «Կապիտալ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին» տողը՝ «(30,842.0)» թվով, հանել որոշումից.

57) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Վայոց ձորի մարզպետարաններին գումար հատկացնելու մասին» N 2031-Ն որոշման N 3 հավելվածի 1157 «Քաղաքային զարգացում» ծրագրի 12018 միջոցառումը լրացնել «Այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական հոդվածով՝ «(133,968.0)» ֆինանսական ցուցանիշով, իսկ «Շենքերի և շինությունների շինարարություն» տնտեսագիտական հոդվածի «(206,252.8)» ֆինանսական ցուցանիշը փոխարինել «(72,284.8)» ցուցանիշով.

58) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 2034-Ն որոշման՝

ա. N 5 հավելվածի աղյուսակում 1136 ծրագրի 11001 միջոցառման մեջ «Առողջապահական և լաբորատոր նյութեր» բառերը փոխարինել «Հատուկ նպատակային այլ նյութեր» բառերով,

բ. N 8 հավելվածում 1004 «Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի «12001» միջոցառման դասիչը փոխարինել «11011» դասիչով և միջոցառման վերնագրից հանել «12001» թիվը,

գ. N 9 հավելվածի 1138 ծրագրի 31002 միջոցառման տողից հետո կատարել լրացում՝ համաձայն N 26 հավելվածի,

դ. N 17 հավելվածի N 15.18 աղյուսակում և N 18 հավելվածի N 9.1.32 աղյուսակում 1138 ծրագրի 11001 միջոցառումից հետո կատարել լրացում՝ համաձայն NN 27 և 28 հավելվածների,

ե. N 17 հավելվածի N 9.28 աղյուսակի և N 18 հավելվածի N 9.1.33 աղյուսակի 1158 ծրագրի 31001 միջոցառման մեջ «Համակարգչային սարքավորումների քանակը, հատ» բառերը փոխարինել «Վարչական սարքավորում» բառերով,

զ. N 17 հավելվածի N 9.8 աղյուսակի և N 18 հավելվածի N 9.1.8 աղյուսակի 1157 «Քաղաքային զարգացում» ծրագրի 12018 միջոցառման մեջ «Քաղաքի 219 փողոցների լուսավորության համակարգի արդիականացում ավտոմատ կառավարման համակարգով՝ լուսակետ՝ հատ» արդյունքի չափորոշչի «(4166)» ցուցանիշը փոխարինել «(2476)» թվով, իսկ «էլ. էներգիայի և ծախսի տնտեսում՝ տոկոս» ցուցանիշի «(30)» թիվը՝ «(14)» թվով,

է. NN 17 և 18 հավելվածների NN 9.31 և 9.1.38 աղյուսակների 1060 «Մարդու իրավունքների պաշտպանություն» ծրագրի 11002 «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստում» միջոցառման «Ուսուցման խմբերի քանակ» և «Ունկնդիրներից վկայագիր ստացածների տեսակարար կշիռ, տոկոս» արդյունքի չափորոշիչներ տողերի «տարի» սյունակը համապատասխանաբար լրացնել «(3)» և «(100)» թվերով.

59) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 2037-Ն որոշման N 2 հավելվածի աղյուսակում «Հարկային եկամուտներ և պետական տուրքեր» բառերը փոխարինել «Այլ եկամուտներ» բառերով և NN 7 և 8 հավելվածներում 1201 ծրագրի «Շտապ բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման «11002» դասիչը փոխարինել «11001» դասիչով.

60) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացում կատարելու մասին» N 2097-Ն որոշման NN 5 և 6 հավելվածների աղյուսակների 1088 ծրագրի 12010 միջոցառման «Շահառուների թիվ, մարդ» տողում «(128)» ցուցանիշը փոխարինել «(14)» ցուցանիշով, իսկ «Ծրագրի արդյունքում մեկ տարվա ընթացքում զբաղվածություն ձեռք բերած անձանց մասնաբաժինը շահառուների ընդհանուր թվում, տոկոս» տողը հանել.

61) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 2102-Ն որոշման 1-ին կետում «Ներքին բաժնետոմսերի և այլ մասնաբաժինների ձեռքբերում» բառերը փոխարինել «Արտաքին բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերում» բառերով, իսկ N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 29 հավելվածի.

62) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 2164-Ն որոշման NN 4 և 5 հավելվածների 1124 ծրագրի 11005 միջոցառման աղյուսակի «Մասնակցություն գրքերի միջազգային ցուցահանդեսներին, ցուցահանդեսների քանակը» արդյունքի չափորոշչի տողում «(3)» նվազեցվող ցուցանիշը փոխարինել «(1)» ցուցանիշով, իսկ «Մասնակցություն գրքերի միջազգային ցուցահանդեսներին, գրքերի քանակ» տողում «(600)» նվազեցվող ցուցանիշը՝ «(200)» ցուցանիշով.

63) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 2168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչել.

64) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ, լրացումներ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և գնման գործընթացը կազմակերպելու մասին» N 1532-Ն որոշման N 4 հավելվածի «Ծրագրի դասիչը» և «Միջոցառման դասիչը» տողերը համապատասխանաբար լրացնել «1090» և «31007» թվերով:

3. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեով նախատեսված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող մարմինների ղեկավարներին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով (այդ թվում՝ նաև սույն որոշմամբ), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման (այսուհետ՝ սույն կետում N 2215-Ն որոշում) 3-րդ կետի 3-րդ ենթակետով տրված իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համաձայնությամբ Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեում կատարված վերաբաշխումների, փոփոխությունների և լրացումների արտացոլումն իրենց կողմից ղեկավարվող մարմինների՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն սահմանված կարգով ներկայացվող Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունների համապատասխան ծրագրային ցուցանիշներում: Ընդ որում, «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) N 1 հավելվածի N 2 աղյուսակի և նույն օրենքի այլ աղյուսակների ու հավելվածների, ինչպես նաև N 2215-Ն որոշման N 5 հավելվածի և նույն որոշման այլ

աղյուսակների ու հավելվածների միջև ֆինանսական ցուցանիշների գծով և այլ տեխնիկական բնույթի անհամապատասխանությունների առկայության դեպքում, Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը կազմելիս՝ առաջնորդվել համապատասխանաբար օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակով և N 2215-Ն որոշման N 5 հավելվածով, իսկ ոչ ֆինանսական ծրագրային ցուցանիշներ և գնումների պլանի ցուցանիշներ սահմանված չլինելու դեպքում՝ նշված հաշվետվություններում նախատեսել նաև ոչ ֆինանսական ծրագրային ցուցանիշները և գնումների պլանի ցուցանիշները:

4. Հույժ գաղտնի:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

11.02.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ